


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ՀՈԳԵՒՈՐ ԿՐՕՆՔԸ**

Մարդը երբէք չէ գոհացած զինքը չըջապատող բնական, նիւթական միջավայրով եւ անոր մէջ յայտնուող տեսանելի, չօշափելի երևոյթներով. այլ միշտ ջանացեր է այս տեսանելի հունէն անդին թափանցել եւ անտեսանելին գտնել, որուն վերադարձ է միշտ՝ այս տեսանելի երևոյթները վարող ոյժ ունենալու հանգամանքը: Տեսանելիէն դէպ ի անտեսանելին, նիւթականէն դէպ ի աննիւթը, մարմնականէն դէպ ի հոգեորը երկարող ստեղծութէն վեր մագլցելու համար՝ մարդը շարունակ հսկայ ճիգեր կատարած է, որոնց մէկ արձանագրութիւնն է միայն մարդկային պատմութիւնը: Այս բացարձակ արժէքները, ճշմարտութիւնը գտնելու համար իր կատարած ոգորումներուն մէջ մարդը յաճախ գտն յուսահատութեան մատնուած է, զինքը պարփակող նիւթին սեղմումներուն, ճշումներուն պատճառաւ, ան յաճախ սոսկալի անկումներ ունեցեր է անտեսանելին գտնելու ջանքին մէջ, եւ կիանքը դարձած է նիւթականացեալ, նեղ եւ մեքենական: Մարդը շատ անգամ նոյնիսկ վհատեցուցիչ տկարութիւն մը ցուցուցած է անտեսանելի հոգեոր իրերը ըմբռնելու մէջ. (կարդա՛ Յիսուսի եւ Նիկողիմոսի խօսակցութիւնը Յովհ. Գ. 9-12): Եւ այն բոլոր անտեսանելի երևոյթները, վերա-

ցական գաղափարները, հոգեոր արժէքներն ու ճշմարտութիւնները, գորոնք մարդ կրցեր է ամբարել իր գոնձաւանին մէջ, տեսանելի երևոյթներուն, չօշափելի իրերուն եւ նիւթական գոյութիւններուն մէջէն տեսած եւ անոնց միջոցաւ բացատրած է. մէկ խօսքով մարդ կրցած է անտեսանելի խորհուրդը չօշափելի տեսանելի խորհրդանշանով ըմբռնել եւ բացատրել:

Նախնական մարդուն եւ մանուկին համար իւրաքանչիւր բան, իւրաքանչիւր գաղափար պատկեր մըն է: Անոնք երբ գեղեցկութեան վրայ կը մտածեն անպատճառ իրենց գեղեցիկ կարծած մէկ առարկան միտք կը բերեն. գոհոյութեան գաղափարը անոնց մտքին մէջ սեղանի վրայ զոհուող ուէ մէկ կենդանիին պատկերը կ'արթնցնէ: Բայց քանի մարդ կը զարգանայ վերացական գաղափարները, հոգեոր իրերը ան կամայ կամաց կ'սկսի պանազանել եւ գտնել առարկաներէն եւ կամ այդ առարկաներուն պատկերներէն, եւ այս կերպով կ'սկսի կամաց կամաց նիւթին միջոցին սահմաններէն անդին անցնել եւ հոգեոր մթնոլորտի մը մէջ սաւառնիլ: Սակայն նիւթականէն դէպ ի աննիւթը անցնելու ջանքը կը պահանջէ անսպառ կտրով եւ խիզախ հոգի մը, եւ հետեւաբար մարդը շատ անգամ չէ կրցած այս նիւթական աշխարհէն բաժնուիլ, եւ զեանաբար սօզունի կիանք մը ապրած է, նիւթականացնելով ամեն ինչ:

Այս իրողութիւնը՝ ինչպէս կեանքի ամին մէկ մարդին մէջ նոյնպէս կրօնական կեանքի մէջ ալ սովորական երևոյթ մ'է։ Կրօնքը, որ հոգեւոր ճշմարտութիւններու ապրումն է, յաճախ նիւթանականացած ձեւերուն մէջ փափուկում մնացած է։ Աստուած, որ հոգի է, նախնական մտայնութեան տէր մարդուն և մանուկին համար մեծցուած մարդ մըն է։ Այս մարդակերպ Աստուածը կը խօսի, կը տեսնէ, կը քալէ, կը գործէ, կը քնանայ, կը հանգչի, կը բարկանայ, կը զղջայ ճիշտ մարդու պէս։ Աստուծոյ խոկութիւնը հասկըցընելու համար մեր գործածած «հայր» բառը զերծ չէ երբեք այս մարդկային նիւթական առումէ։ և այս պատճառաւ Աստուծոյ պատկերը, գծուած է աղկարդ հոր մը նմանութեամբ։

Քրիստոնէութիւնը՝ որ գերազանցօրէն հոգեւոր կրօնք մ'է՝ մարդկային այս տկարութեան պատճառաւ նիւթականացեալ ձեւ մառած է։ Քրիստոնէական փորձառութեան վերաբերեալ հոգեւոր ճշմարտութիւնները բացատրելու համար ստիպուած կը գործածենք այնպիսի բառեր՝ որոնք իրապէս նիւթական են իրենց առումով։ — հայր Աստուած, աղաւնակերպ իջնող Ս. Հոգին, մաքրութիւն և Աստուծոյ տունը, զրախտ և զօրք, խաչ, փրկութիւն, և այլն։ Այս բառերուն իւրաքանչիւրը իր ետեւը պահուած ունի հոգեւոր խորունկ ճշմարտութիւններ, զորոնք շատ անգամ կ'անտեսենք, կամ չենք կրնար տեսնել և մեր ըմբռնումները սահմանափակուած կը մնան անոնց նիւթական իմաստին մէջ։ Մահմտականին համար անըմբռնելի է Աստուծոյ հայր ըլլալու գաղափարը, քանզի այն միշտ ոչ թէ աստուածային սէրը այլ մարդկային սեռը միտք կը բերէ։

Մենք՝ ամէն դաւանանքի պատկանող Բրիտոնիկներս ևս ազատ չենք եղած և ներկայիս ալ ազատ չենք կրօնքը նիւթականացընելու վտանգէն։ Այս շատ ընդարձակ նիւթին մանրամասն ուսումնասիրութիւնը մեզ շատ հեռու պիտի տանէր, որուն համար շատ նեղ կուզան մեր սխեմաները։ Բայց պէտք է ըսել ուժգնօրէն թէ՝ ներկայիս մեր հոգեւոր կեանքին սպառնացող վտանգներէն մէկն է այս։ Երբ կը կարգանք թէ մարդը Աստուծոյ նմանութեամբը ստեղծուեցաւ, պէտք է հասկընալ թէ այս նմանութիւնը հոգեւոր է ոչ թէ

նիւթական, երբ կը կարգանք թէ Աստուած կը խօսի, կը քալէ, կը տեսնէ, կը լսէ, և այլն, այս չի նշանակիր թէ Ան մարդու պէս ոտք, ախանջ, աչք ունի այլ ան հոգեւոր աճնաւորութիւն մ'է։ Պէտք է սթափինք, և քրիստոսի կեանքը և վարդապետութիւնները այս լոյսով ուսումնասիրենք, պէտք է խուսափինք քրիստոնէութիւնը պղտրկցնելէ անոր ճշմարտութիւնները յայտնող բացատրութիւնները իրենց նիւթական առումով ընդունելով, եթէ կուզենք աւելի բարձր, և երկնային ոլորտներուն մէջ թեւածիլ։ Պէտք է մեր կրօնքը հոգեւորականացնենք։

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՖՐԱՆՔ ԹՕՄԱ

Լեմանի լճին վրայ պտոյտ մը կատարելու համար նաւ կը մտնէինք երբ թերթի մը ցրուիչը բոլորին ուշադրութիւնը հրաւիրելով կը ծանուցանէր մահը հուշակաւոր քարոզիչ՝ Ֆրանք Թօմայի։ Կը ցնցուիմ. ականջներուս չեմ կրնար հաւատալ մինչև որ աչքերովս կը կարդամ այդ սե գոյժը։ Կը տեսնեմ նաև թէ իմ շուրջս գտնուողներն ալ նոյն ազդեցութեան տակ կը գտնուին և լուռ վիշտ մը կը սուսառնի շատերու դէմքին վրայ։ Անսովոր բերդ մըն է որ կը փլի, ճշմարտութեան ախտիկան մը որ պատնէջին վրայ կ'ընայ յանկարծ, սրտի հիւանդութիւնէ վարնուած։

Իսկապէս անոր մահը մեծ կորուստ մըն էր, մեծ պարապ մը կը թողուր թէ օտարականներու և թէ տեղացիներու սրտին մէջ, անոնց՝ որոնք զայն մտիկ ընելու և անոր իմաստուն խօսքերը լսելու գերագոյն վայելքը կ'ունենային։

Ֆրանք Թօման պէտք էր տեսնել բնմին վրայ, առանձին ազօթաժողովներուն, Սուրբ Գրոց դասերուն և անհատական խօսակցութիւններուն մէջ։ Ժընէվ հասնելէս անմիջապէս վերջ ճանչցայ այդ շատ մեծ և նոյն տան շատ խոնարհ մարդը ու չկրցայ զսպիլ գնահատումս երբ ան իր ծեր տարիքին մէջ հեալէն մազլցեցաւ մեր յարկաբաժնի երկայն սանդուխները։

Տեղւոյս կարեւորագոյն թերթը իրաւունք ունէր անոր մահուան առթիւ այսպէս գրելու, «Ամբողջ Ֆրանսախօս բողոքականութիւնը

սուգի մէջ է, և չափազանցութիւն չըլլար ըսելը թէ ամբողջ Քրիստոնեայ աշխարհը սուգի մէջ է, որովհետեւ անոր ազդեցութիւնը եկեղեցիի մը կամ յարանուանութեան մը սահմաններէն անդին կ'անցնէր, անոր անունը ծանօթ էր ամենուն և ամէն տեղ:»

Յրանք Թօմա 1862 ին ծնած է Զուլիցերիոյ փոքրիկ գիւղերէն մէկուն մէջ, գաւաին էր աղնիւ նահապետական ընտանիքի մը, որ բազմաթիւ ուրիշ քարոզիչներ ալ տուած է:

Ժընէվի մէջ աւարտած է իր Գոլէճական և Համալսարանական ընթացքը: հետեւելով հին և նոր գրականութեան և գիտական ճիւղերու, աստուածաբանութիւն և սաւարտելով Գերմանիա անցած է իր ուսումը կատարելագործելու:

Սքանչելի ուսանող մ'եղած է ան: Իր ուսանողական շրջանի կարգ մը ցցուն յատկանիշները և Ե. Ք. Ընկերակցութեան հանգէպ իր տածած եռանդն ու սէրը կանխաւ տրդէն ապագայ մեծ քարոզիչի մը գրաւականներն եղած են:

Ան իր զործին ձեռնարկած է Աստուծոյ հոգիով լեցուած և երկնային ձայնէն առաջնորդուած: Նախ Պէլճիզա, ապա Զուլիցերիական երկու փոքրիկ գիւղերու մէջ յաջորդաբար քարոզելէ ետք, կանչուած է ստանձնելու Ժընէվի մէջ կաղմուած «Ժողովրդական Աւետարանչութիւն» կոչուող գործը, որմէ ծնաւ յետոյ «Քրիստոնէական Ընկերութիւնը», անկախ տեղական եկեղեցիներէն: Մեծանուն հայասէրին Լիոփոլտ Ֆալբի երկու եղբայրները հիմնադիրներն ու վարիչներն եղած են այս գործին: Յրանք Թօմա իր կեանքին վերջին 32 տարիները նուիրեց սոյն Ընկերակցութեան:

Պաշտամունքները զորս ինք վարեց յաջորդաբար ամէն Կիրակի՝ տեղի կ'ունենային Վիքթորիա Հոլ կոչուած երաժշտասրահին մէջ, որ Եւրոպայի ամենաշքեղ սրահը նկատուած է շտաբէն: Հոն կը հաւաքուէին ամեն ազգէ, զատակարգէ, սեռէ և տարիքէ անձինք: Անոնց իւրաքանչիւրին հոգիին համապատասխան պատգամ մ'ունէր, հաւասարապէս գոհացում տալով համալսարանականին ու աւամիկին: Հազարաւորներու առջեւ մարգարէի մը պէս կանգնած՝ երբեմն կը գոռար թունդ հանելով թմրած հոգիները, զանոնք զգաս-

տութեան կոչելու համար, երբեմն թովիչ, զոգտրիկ շեշտերով, բանաստեղծական բաւերով զանոնք Աստուծոյ սիրոյն եւ զթութեան կը հրաւիրէր: Անթիլ հեռաձայնի միջոցաւ իր քարոզները կ'ունենդրուէին հեռաւոր անկիւններէ: Իսկ Կիրակի օրուան միւս պահերուն քաղաքին այլեայլ թաղերուն և շրջակայքի գիւղերուն մէջ կաղմակերպուած ուրիշ պաշտամունքներու կ'երթար առաջնորդել:

Շարաթուան իւրաքանչիւր օրը գրաւուած կ'ըլլար արդէն ամիսներ առաջ կարգաւ գրուած ժողովներով, բանախօսութիւններով, այցելութիւններով և Սուրբ Գրոց դասերով որոնց ամենուն կը հասնէր ոտքով, երկանիւով, ինքնաշարժով կամ երկաթուղով: Տարիներով փրօֆէսոր Աստուածաբանական Ազատ Ճեմարանին, անգամ Ե. Ք. Ընկերակցութեան Տիեզերական Կօմիտէին, զօրաւոր նեցուկ միսիօնարական շարժումներու, Գիինհհատից Ընկերութեան նման բարեկապտակ կաղմակերպութիւններու և ճշմարիտ պաշտպան ճնշուած ազգերու:

Հայկական ջարդերու առթիւ իր բողոքի ձայնը բարձրացուցած է Վիքթորիա Հոլի ամպիոնէն: Ուրիշ Զուլիցերիայի հայասէրներու կարգին ինքն ալ եղած է համոզուած պաշտպան մը մեր ազատագրութեան:

Յրանք Թօմա ո՛չ միայն ծառայեց խօսքով, հապա նաեւ գրչով: Ան հրատարակեց երկոտանեակ մը գրքեր կրօնական և ընկերային նիւթերու վրայ: Կը խմբագրէր իր պատկանած Աւետարանչական Ընկերակցութեան թերթը: Ամէն ամիս իր կարեւորագոյն մէկ քարոզը լոյս կ'ընծայէր թերթիկի ձեռով: Իր պատրաստած օրացոյցի էջերը ամէն օր կը կարգացուէին մեծ ախորժակով բազմաթիւ բարեպաշտներու կողմէն: Շատերու հրաշալի երևոյթի մը պէս թուած է իր այնքան խտացեալ կեանքը և բազմակողմանի ու ճիւղ գործունէութիւնը: Միթոտաւոր աշխատող մ'եղած է ան և իր տաղանդաւոր ուղեղին միացուցած անսպառ հաւատք և անընկճելի կորով:

Իր վրայ սրտի տկարութիւն մը նշմարուելուն, խոհեմութիւն և աշխատանքի չափաւորութիւն յանձնարարած էին իրեն ըլծիչները, երբ մէկ երկու բարեկամներ զինք

հրաւիրեցին միանալու անցեալ գարուն զէսի երուսաղէմ կատարուող խմբական ուխտագնացութեան մը:

Յրաք թօմա Վերին Երուսաղէմ երթալէ առաջ այցելեց երկրաւոր երուսաղէմը և հաբուստ ատաղձով ու խորունկ ներշնչութեամբ վերադարձաւ: Իրեն հիացողները կը յուսային թէ ան տակաւին տարիներով պիտի կրնար որոտալ Աւետարանի պատգամը: Սակայն իր մահը հասաւ այս ամառ Օգոստոսին անակնկալօրէն, երբ ինք օգափոխութեան համար Բաղայի ջերմուկները կը զբոսնէր:

Ննջեցեալին երկու զաւակները և փեսան ձեռնագրեալ երէցներ են և կը զործեն ներկայիս Ֆրանսայի և Զուելցերլոյ մէջ: Իր զաւակներն ու սաները կը ճգնին հաւատարիմ ժառանգորդները եղած ըլլալ մեծ աւետարանիչին, իր հոգին կը ներշնչէ զինքը ճանչցող բազմաթիւ քարոզիչներ, իր գրչի արտադրութիւնները (որոնցմէ 1929ի օրացոյցը, զոր պատրաստելէ յետոյ վախճանեցաւ) տակաւին պիտի խօսին ճշմարտութիւնը որոնող հոգիներու: Եւ այս պահուն երբ սոյն տողերը կը գրեմ «Նոր Աւետարան» ընթերցողներուն համար՝ Զուելցերլոյ գիւղերն ու քաղաքները կը շարունակեն անոր յիշատակին նուիրելու սուգի ու ներշնչութիւն ժողովներ:

Ժրճեմ:

ՎԱՐՍՆԵՆԻԿ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ հարցուէր ինձ թէ ճիշդ ինչ է Քրիստոսի բարոյագիտութեան որոշ յատկանիշը, պիտի տարուէի պատասխանել թէ «Այն իրողութիւնը թէ ան բարոյագիտութիւն չէ երբէք»: Մովսէս օրէնք մ'ունի, Քօնֆիլիոս սխտէմ մը, Ստոյիկները փիլիսոփայութիւն մը: Քրիստոս փոխանակ օրէնսդրութեան իտէալ մը կուտայ, փոխանակ կանոններու՝ կեանք մը, փոխանակ փիլիսոփայութեան՝ արուեստ մը: Քրիստոս իր վարդապետութեան մէջ կը խօսի այնպէս իրր թէ ինք ապրելակերպը նկատեց կեանքի արուեստը՝ հաստատուն չինութեան մը արուեստը: Գեղեցկագիտական յատկութիւն մը կայ բարոյական հարցերու իր հպումին մէջ: Բարոյականութիւնը բաւը կը թելադրէ կանոններ, օ-

րէնք, տեսական սկզբունքներ: Բայց Յիսուսի վարդապետութեան մէջ ստեղծագործութեան, արկածախնդրութեան իմաստը կայ: Քրիստոս զԱստուած լրջօրէն կ'ունէ, բայց ոչ վեհափառօրէն: Իրեն համար Աստուած բրուտ մը, իր կաղապարած կաւին ինքնակալը չէ: Կենդանի Աստուծոյ մը կեանք կը բղխի, իսկ կեանքը Ազատութիւն է: Քրիստոսի համար Աստուած գերբնական օրէնսդիր մը, յաւիտենական արդարութեան խոթողութեամբ պատառը չէ: Անիկա կը նմանի անառակ Որդիին հօրը և կամ կորսուած ոչխարի առակին հովիւին:

(Պ. Հ. ՍԹՐԻԹԸՐ)

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՅԱՂԹԱՆԱԿ

«Վասնզի խաւարը կ'անցնի ու ճշմարիտ լոյսը արդէն կերենայ»: Ա. Յովհ. 1. 8:

Ինչպէս ուրիշ կրօնքները նմանապէս քրիստոնէութիւնն ալ ունեցած է իր մութ շրջանները անցեալին մէջ, ուր հազիւ նշմարելի եղած են ճշմարտութեան պայծառ ճառագայթները: Վերջին քսան տարիներու արիւնահեղ պատերազմները, որոնք տեղի ունեցան աշխարհի ամենաքաղաքակիրթ ժողովուրդներու և ազգերու միջև, մեզի պահ մը խորհիլ տուին թէ «Բաղաքակիրթ քրիստոնէայ ազգերը» խաչեցին Քրիստոսը, ճշմարտութիւնը, Լոյսն ու Աստուածային Սէրը: Երկիրը խաւարեցաւ վառօդի մուխերէն: Շահապաշտութեան ու քինախնդրութեան մութ ամպերը եկան ու ծածկեցին արդարութեան լուսապայծառ զէմքը և սատանան յաղթական հանդիսացաւ...: Այս պարագաներու տակ խորհողներ եղան, թէ քրիստոնէութիւնը, Քրիստոսի կրօնքը իր վախճանին հասած է այլևս. որովհետեւ նա անկարող եղաւ կասեցնելու պատերազմը:

Պատերազմը վերջ գտաւ. «Խաւարը անցաւ» եւ հիմա բոլոր պատերազմիկ և ոչ-պատերազմիկ պետութիւնները եւ ժողովուրդները հսկայաքայլ կը յառաջդիմեն զԿալի խաղաղութիւն, համերաշխութիւն և սէր: Վերջին տասը տարիներու պատմութիւնը կենդանի կերպով կը վկայէ թէ քրիստոնէութիւնը պիտի յաղթանակէ: Բաղաքակիրթ մեծ պետութիւնները հսկայ քայլեր առած են միջազգային յարաբերութիւնները հաստատ հի-

մերու վրայ դնելու: Պատերազմը ապօրինի հռչակուելէն պատ, զրեթէ բոլոր կարեւոր պետութիւնները ընդունելու պատրաստ են «մէջարձակողականի դաշինքը» յօժար են իրաւարարական ատեանի դիմել միջազգային հարցերը լուծելու համար:

Եկեղեցական խմբաւորումներն ու միջարանականական ժողովները, անցեալ տարուան ժընէվի ժողովը եկեղեցիներու միութեան շուրջ, տարբեր բողոքական եկեղեցիներու միանալը Մ. Նահանգներու, Փանատայի եւ Սկովտիոյ մէջ, Բուէյքըրներու տենդոտ գործունէութիւնը պատերազմը բողոքովին ջնջելու համար, կենդանի ապացոյցներն են թէ «Ճշմարտութեան Լոյսը» պիտի երևնայ, եւ քրիստոնէական սէրն ու համերաշխութիւնը պիտի յաղթանակէ վերջնականապէս:

Քրիստոնէութիւնը ծնած յաւիտեանականութեան ծոցէն անծայր գետի մը նման կը շարունակէ իր ընթացքը յամրաքայլ: Անոր սկիզբը սէրն է, ու վախճանը՝ միութիւն: Անիկա անհաշուելի ժամանակներէ ի վեր կը հոսի նոր կեանք տալով ամենուն: Փարիսեցիներուն ատելութիւնը, իր բարեկամներուն տկարութիւնը, իր ամենէն անվերջ աշակերտին ուրացումը, Պիլատոսին անարգանքը, իր մարմինը վիրաւորող սրածայր գամերը, մարդոց մեղքին դառնութիւնը, երբէք չկարողացան ստուերացնել Քրիստոսը, որուն սկզբունքները այսօր յաղթական են:

Զխարուիք, ռիսակալութիւնը չի կրնար յաղթել սիրոյ ու եղբայրասիրութեան, սուտն ու կեղծիքը՝ ճշմարտութեան, և անբողոքութիւնը՝ արդարութեան:

Մարդկութեան փրկութեան ճամբան Բեթլէհէմէն Գողգոթա երկարող ճամբուն մէջն է, որուն առաջնորդը Քրիստոս ինքն է: Ինչպէս հեռատես Եսայի մարգարէն երգած է. (Ես. 2. 3-5) «Եւ շատ ժողովուրդներ պիտի երթան ու ըսեն, եկէք, Եհովայի լեռը, Յակոբի Աստուծոյն տունը ելլենք, որպէսզի մեզի իր ճամբաները սորվեցնէ, ու անոր շաւիղներուն մէջ քալենք. վազնզի օրէնքը Սիօնէ, ու Տէրոջը խօսքը երուսաղէմէ պիտի ելլէ... Ու անոնք իրենց սուրերը խոփեր, և իրենց նիզակները յօտոցներ պիտի շինեն: Ազգազգի վրայ սուր պիտի չվերցնէ. և ալ պատերազմ պիտի չսորովին»: Այն օրը պիտի

գոյ ու չ կամ կանուխ, երբ «նոր երկիր մը և նոր երկինք մը» պիտի հաստատուի, և Արարութեան ու ճշմարտութեան լոյսը պիտի փայլի առ յաւէտ: Տէր, շուտ գոյ այն օրը. ամէն:

ՅԱՐՈՒԹԻՒՆ Տ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՈՐՈՅ ԵՐԳԵՐՈՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԱՅ

Հետեւեալ հաճոյալի իրողութիւնը կարգացր եւ միջանի մենաւոր ծովեղերքներու վրայ ընակող ձկնորսներու մասին: Երբ մարդիկ իրենց նաւերով ձուկ որսալու կ'երթան տանտիկիւնները տուն կը մնան: Երբեմն նաւերը երբ կը հեռանան, մուշը և գոլորշին արեւը կամ աստղերը կը ծածկեն, այնպէս որ մարդիկ չեն գիտեր թէ ո՞ր ուղղութեամբ նաւարկեն գէպի տուն: Այսպիսի պարագայներու մէջ կիւնները և մանուկները ծովեղերքը կուգան և կ'սկսին իրենց ընտանեկան երգերով ուղղութիւն տալ հեռուն ջուրերուն վրայ իրենց շուարած սիրելիներուն: Ամուսինները, հայրերը և եղբայրները կը լսեն ծովուն վրայ տարածուող այս հաճոյալի երաժշտութիւնը. որ վայրկեանապէս կ'անհետացնէ իրենց չփոթութիւնը: Անոնք կ'սկսին թիավարել զէպի այն կողմը ուսկից ձայներ կուգան. որոնց կը պատասխանեն իրենց սովորական երգերով յայտնելով ծովեղերքը հաւաքուած իրենց սիրելիներուն թէ կուգան:

Ասիկա շատ մը կեանքերու մէկ պատկերն է: Այս մեղսալից և վշտալից աշխարհի մէջ շատեր կը շուարին երբ ծանր փորձութեան մը մատնուին և չեն գիտեր թէ ո՞ր ուղղութեան պիտի հետեւին: Բայց անոնք վերի հայրենիքը սիրելիներ ռնին փառքի մէջ, և անանկ կերեւայ թէ լուծեան մէջէն և երկնային ափերուն վրայ անոնք կ'երգեն իրենց սիրոյ երգերը, մինչ իրենց բարեկամները երկրի վրայ մշուշներուն մէջ կը խարխափին գանոնք ապահովութեամբ գէպի տուն առաջնորդելու: Ո՛հ, դուք ծնողներ և զաւակներ, որ հոն սիրելիներ ունիք, մտիկ ըրէք և պիտի լսէք ձայներ որ ձեզ փառքի կը կանչեն:

Թարգ. Թ. Ն. ՏԱՂԼԵԱՆ

ՆՈՐԱՀԱՍՏԱՏ ՀԱՅ ԳԻՒՂԵՐԸ

Ս. Երկիրը այցելողներուն բոլորին համար սովորական դարձած է անպատճառ գիրք մը կամ յօդուած մը հրատարակել իրենց ուղևորութեանը մասին: Նոյնը եղած է նաև Հայաշէն այցելողներուն համար:

Չորս հինգ տարիէ ի վեր թէ հայերու եւ թէ օտարներու կողմանէ շատ մը ծրագրերն մշակուեցան գաղթականներու տեղաւորման մասին: Ոմանք առաջարկեցին գաղութը հաստատել Եփրատի ափերուն վրայ, իսկ ուրիշներ Աղեքսանդրէթի սանճագին մէջ: Այս երկու վայրերու առողջապահական եւ ապահովական առաւելութիւնները եւ թերութիւնները հայերու կողմանէ սովորական վիճաբանութիւններու առարկայ դարձան: Վերջապէս հայերու մեծամասնութիւնը եւ Հոգատար կառավարութիւնը յարմար գատեցին այս տեղաւորումը կատարել ծովեզերեայ վայրերը, Աղեքսանդրէթի շրջանին մէջ, որուն թէ՛ լեռնային եւ թէ՛ դաշտային մասերը մալարիայէ վարակուած են: Ես առիթը ունեցայ երկու անգամ այցելելու Հայաշէն եւ Նոր Զէյթուն գիւղերը: Նպատակ չունիմ քննադատական գիտողութիւններ ընել, այլ կուզեմ կարճ կերպով անոնց առողջապահական պէտքերուն վրայ խօսիլ:

Հայաշէն գիւղը հաստատուած է պզտիկ բլրակի մը վրայ, մեծ աղբիւրի մը քով, եւ ներկայիս ունի 92 կատարելապէս շինուած տուներ, ութը հատ ալ շինուելու վրայ են: Աղբիւրին առջեւ ճահիճ մը կայ, որուն պատճառաւ շատ մեծ գններ այդ վայրը մալարիայի բոյն կը դարձնեն: Բնակչութեան թիւն է 450, որմէ 150 առաջին այցելութեանս միջոցին ճահճատենդէն վարակուած գտայ եւ միացածն ալ այդ վտանգին ենթակայ: Երկրորդ այցելութեանս միջոցին հիւանդներուն թիւը 120 էր: Մինչեւ հիմա չորս մահ եւ հինգ վիժում պատահած է:

165 անձերէ բաղկացեալ 40 ընտանիքներ հաստատուած են Նոր Զէյթունի մէջ, որ Մուսա Տաղի մէջ Պիթիասի մօտ նախկին թրքական գիւղ մէր: Առաջին այցելութեանս միջոցին հոս 30 հիւանդներ գտայ, երկրորդին՝ այս թիւը 85ի բարձրացած էր, գրեթէ բոլոր ժողովուրդը հիւանդ էր:

Մանրագիտակի քննութեամբ հաստա-

տուեցաւ որ այս երկու գիւղերուն մէջ մալարիայի բոլոր տեսակներն ալ կը գտնուին: Տնտնալու ժամանակը չէ. օրուան հարցը այս հիւանդներուն անմիջական օգնութիւն հասցընելն է: Այս առթիւ աս ալ ըսեմ որ պատմականօրէն ճշդուած է՝ թէ այսպիսի դանդաղածային տեղափոխութիւններու մէջ հաստատութեան առաջին տարիներուն համաճարակները շատ սովորական են, եւ հաստատուողները շատ կը նեղուին մինչեւ որ նոր միջավայրի պայմաններուն վարժուին: Պէտք է խոստովանիլ թէ հայ եւ օտար տեղաւորումի եւ շինութեան տնօրէնին եւ օգնական եւ բոլոր մասնախումբին ամէն կերպ ջանքերը ջերմապէս շնորհաւորելի են, որոնց բարեբար արդիւնքները յայտնի կը տեսնուին: Շատ ուրախանալի եւ քաջալերելի էր տեսնել թէ այս հիւանդ գաղթականները եռանդով աշխատած են իրենց նոր բոյնը շինելու համար: Այս տարուան արտասովոր տաքը, կլիմայի նոր պայմանները եւ ժողովուրդին մէջ տեսնուած հիւանդութիւնը պէտք չին մեզ յուսահատութեան մատնել: Յաջողութեան ճամբան նեղ եւ խորտուբոր է. իսկ յաջողութեան բլուրը հասնիլ կարելի չէ առանց չտոգութեան: Ուստի մեր անմիջական պարտականութիւնը առողջապահական տեսակէտէ երկու կէտերէ կը բաղկանայ: Առաջին՝ ներկայ հիւանդութիւնը դարմանելու եւ երկրորդ ապագայ հիւանդութիւնը արգիլելու համար միջոցներու դիմել: Երկրորդ կէտի մասին կ'ուզենք ուրիշ առիթով խօսիլ, եւ ներկայիս մեր գիտողութիւնները առաջին կէտին չուրջ կատարել:

Երկու գիւղերու մէջ մօտաւորապէս 800 անձեր կը գտնուին: Բոլոր ժողովուրդը մալարիայէ ապատելու նպատակաւ մէկ ամսուան համար պէտք է 12 քիւօ քիւնին, 60 օսմ. ոսկի, 20 ոսկինոց Նէօ-Սալվարսան (հասարակածային մալարիայէ վարակուածներուն համար), 20 ոսկինոց ալեալ գեղեր, եւ երկու տոմսուան համար ամսականը 25 ոսկիով փորձառու եւ կարող բժիշկ մը: Այս բոլորին համար ընդամենը 150 ոսկի: Հիւանդութիւնը արգիլելու համար աւելի մեծ դուժարի մը պէտք կայ:

Շինութեան համար ծախսուած հողաբաւոր ոսկիներու բաղադրամասը այս պուժա-

ըն շատ չնչին է: Եթէ ազգը պէտք եղած թափով և զիտական մեթոտով անմիջական միջոցներու չի դիմեր այս գաղթականները մէկ ամսուան միջոցին մալարիայէն ազատելու համար, այն ատեն թէ՛ մալարիայի և թէ՛ յառաջիկայ ձմեռնային հաւանական թոքատապի պատճառաւ այս ժողովուրդին մեծամասնութիւնը մահուան դատապարտուած է: Հիմա ոչ թէ խօսքի ալլ գործի ատենն է, ամէն անցնող օր վճռական և մահառիթ ազդեցութիւն մը կրնայ ունենալ այս գիւղացիներուն կեանքին վրայ: Լիայոյս ենք թէ Սուրբիոյ հայութիւնը այս պզտիկ զուժաւորը, որ իր կարողութեան սահմանին մէջ է, սիրով և շուտով պիտի հայթայթէ իր եղբայրներուն համար:

(Տօքթ.) Ծ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Վեր. Ս. Միլքոնեան, Տարսոնի Սէնթ Փօլզ Գոլէճի նախկին ուսուցիչներէն և ներկայիս Ազիքսանդրիոյ Հայ Աւետ. եկեղեցիի հովիւը, իր ամառնային արձակուրդին առթիւ Սուրբիոյ մէջ կատարած իր պտոյտին միջոցին հանդիպեցաւ նաեւ Հալէպ: Դժբաղդարար շատ կարճատեւ եղաւ բաղմարդիւն աշխատաւորին այցելութիւնը: Հոկ. 6, Ծաբաթ իրիկուն Տարսոնի Գոլէճի ուսումնաւարտ և կիսաւարտ աշակերտները գեղեցիկ թէյասեղան մը սարքեցին իրենց նախկին սիրելի դաստիարակին համար. իսկ Կիրակի օրը Համիտիէի եւ Ազիզիէի Հայ Աւետ. բեմերէն ժողովուրդը հաճոյքը ունեցաւ լսելու յարգելի հիւրին հոգեշունչ պատգամները:

ԱՅԼԵԻԱՅԼ

ԱՇԽԱՐՀԻ 12 ԱՄԵՆԱՄԵՆՍ՝ ԱՊՐՈՂ ՄԱՐԴԻԿԸ

Տր. Էնտրըսըն այս հարցումը ուղղեց իր կողմէ հրաւիրուած յանձնախումբի մը, որ 12 իրեկի մամերիկացիներէ կը բաղկանար: Իւրաքանչիւր անդամ նախապատուութեան կարգով 12 անուններէ բաղկացեալ ցուցակ մը պատրաստեց: Էնտրըսըն այս ցուցակներէն առաջնորդուելով 12 անմահներու ցանկը

հետեւեալ կերպով կազմեց. — Էտիսըն՝ ամերիկացի հնարիչ, Մուսօլինի՝ Իտալիոյ ֆաշիսթ վարչապետը, Այնշթայն՝ գերմանացի հրեայ բնագէտ, Շօ՝ անգլիացի գրող, Ֆօրտ՝ ամերիկացի ինքնաշարժի իշխան եւ միլիօնատէր, Փատէրէզիքի՝ Փոլոնիացի երաժիշտ, Բիփլինկ՝ Անգլիացի բանաստեղծ, Տիկ. Բիւրի՝ Ֆրանսացի բատիումի հնարիչ, Բլէմանսօ՝ Ֆրանսացի պետական մարդ և քաղաքագէտ, Ճէյն Էտէմս, Օրվիլ Բայթ՝ ամերիկացի սաւառնակի հնարիչ, Մարքօնի՝ իտալացի անթիլ հեռագրի հնարիչ:

ՆՈՐ ԴԱՐԻ ՄԸ ՆԱԽՕՐԵԱԿԸ

Վերջին երկու տասնեակ տարիներուն ինքնաշարժը մեծ ազդեցութիւն մը ունեցած է մարդկային կեանքին վրայ, մօտեցնելով հեռաւորութիւնները, աւելցնելով պողպատի, հանքածուխի, սիմէնթի, կաշիի, քարիւղի, ապակիի, ևայլնի արտադրութիւնները, ըզբաղեցնելով միայն Ամերիկայի մէջ եօթը միլիօն գործաւորներ, յառաջ բերելով Հէնրի Ֆօրտի պէս միլիօնատէրներ:

Ինքնաշարժի դարին մէջ կ'ապրինք, բայց քիչ վերջը պիտի անցնինք ուրիշ դարի մը, — օդանաւի դար: Վերջերս կատարուած օդային ճամբորդութեան իւրաքանչիւր մղոնին համար 12.5 զրչ. ծախսուած է, մինչդեռ ինքնաշարժով ճամբորդութեան իւրաքանչիւր մղոնին համար 24.5 զրուշ ծախսուած է: Գերմանիոյ մէջ օդանաւորութիւնը, որ հոն աւելի յառաջ գացած է, որոշ ազդեցութիւն մը ունեցաւ գերման կեանքին վրայ: Գերման սաւառնորդներ վերէն տեսան թէ քաղաքները ընդհանրապէս տգեղ տեսք մը կը պարզեն: Անմիջապէս ճարտարագէտներու յանձնախումբ մը որոշուեցաւ բարերոխումներ կատարելու համար:

Թերեւս օդանաւի դարը քոլոր անցեալ դարերուն ամենագեղեցիկը պիտի ըլլայ: Մարդը երկրէն բարձրանալով իր աչքերուն առջև պարզուած պիտի գտնէ ընդարձակ վեհ տեսարաններ, մարդ ամպերու լեռնաշղթաներուն մէջ պիտի կրնայ մոռնալ երկրաքարը ազահութիւնը: Եւ եթէ նոր ու ներշնչող ազդեցութեան ենթարկուի՝ ան պիտի կրնայ հասնիլ բարեկամեցողութեան և ներողամտութեան դարին, որ իտեալ մ'է դարերէ ի վեր:

**ԹՈՒԹԱՆԽԱՄԷՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ ՎԵՐՋԻՆ
ԴԱՆՁԵՐԸ**

Յարգ կը կարծուէր որ Թուխանխամէնի գերեզմանին գանձերը անհատնելի են, սակայն անոնք ալ ուրիշներու պէս հասած են: Թուխանխամէնի գերեզմանին չորրորդ և վերջին սենեակին մէջ շատ հետաքրքրական և արժէքաւոր առարկաներ գտնուեցան:

Այս չորրորդ սենեակը զոգրէն կողոպտուած է, որոնք ոսկին, արծաթը և պղինձը գողցած, իսկ մնացեալ առարկաները տակն ու վրայ ըրած են. սենեակը այնպիսի երեսոյթ մ'ունի որ կարծես թէ ժաժի ենթարկուած է:

Գտնուածներու մէջ նշանաւոր է զոհարեղէնի արկղիկ մը որ ծածկուած է փղոսկրեայ նուրբ տախտակով և նրբորէն հին Յունական դրամներու ձեւով քանդակուած: Այս արկղիկին կափարիչի մէջտեղի քանդակը, որ իր դարուն Պէնվէնութօ Զէլինին եզոզ անձանօթ վարպետի մը գործն է, առարկաներու այս խճողումին մէջ թէպէի գեղարուեստի թերեւս ամենանուրբ մէկ նմոյշն է:

Գտնուած են նաեւ իրարու մէջ զետեղուած և մարդու ձեւով շինուած չորս պղտիկ սնտուկներ, որոնցմէ առաջինը 30 ոտնաչափ երկայնութիւն և այդ ժամանակուայ սպանուականի մը կերպարանքն ունի: Այս ծածկուած է սեւ ձիւթով, որուն վրայ կան պաշտպան աստղաձևներու, աստուածուհիներու և

ոգիներու դիմանկարներ: Երկրորդը՝ թագաւորական ձեւ և զարդարանք ունի: Երրորդ մարդակերպ սնտուկը իր մէջ կը պարունակէ կտոր մը լաթի մէջ փաթթուած չղթայ մը և Ամէնհէթէփ Դ. ի ոսկիէ մէկ արձանիկը, զոր իր կուրծքէն կը կախէր իր կինը՝ Թայի թագուհին, Թուխանխամէնի մէկ ազգականը: Երրորդին մէջ կայ չորրորդ մարդակերպ սնտուկ մը որ իր մէջը կը պարունակէր Թայի թագուհիին մազէն արցալի մը:

Հաւանականաբար Թուխանխամէն Ամէնհէթէփ ընտանիքին վերջին շառաւիղն է և այս առարկաները իրր նուէր կամ իբր ժառանգ ստացեր է:

Գտնուած առարկաներու մէջ սնտուկ մը կայ, որ իր մէջ կը պարունակէ վեց հատ փայտէ կոթով ծակելու երկաթէ գործիքներ, որոնք կը փաստեն թէ Թուխանխամէնի ժամանակ երկաթը նոր գտնուած և հետեւաբար հազուադիւս թանկագին մետաղ մըն էր: Այս գործիքներէն երկուքը նիպակաձեւ, ուրիշ գոյգ մը խարտոցաձեւ իսկ մնացածը տարբեր ձեւերով են: Ասոնք կ'երևի թէ իբր նմոյշ պատրաստուած և իբր այդ թագաւորական զերեզմանը դրուած են. և կամ ալ թագաւորին նուիրուած են այս մետաղին դիւտին եզրիպտոս հասնիլը արձանագրելու համար:

Նշանաւոր է նաեւ զարմանալիօրէն զիւկեցիկ ոսկի կոթով դաշոյն մը, որուն երկաթէ շիկրը տակուին իր փայլը չէ կորսնցուցած:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՐԱԿԻՐԱԿԱՆ

Հոգևոր Կրօնի

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Յրամի Թուս

ՎԱՐՍԵՆԻԿ

Բարոյական Արկածախնդրութիւն Պ. ՍԹՐԻԹԸՐ

Բրիտանական Յաղթանակը

Յ. Տ. ՂԱԶԱՐԵԱՆ

Սիրոյ Երգերով Առաքելորդութիւն

ԹՐԳՐ. Թ. ՏԱՂԵԱՆ

Նորահաստ Հայ Դպրոց

ՏՕԲԹ. Յ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

ԱՅԼԵԻԱՅԼ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնաբարոյական, Դիտական, Կրթական երկչաբարթաթերթ:

Արտօնատէր, **Վ. Կ. Յարութիւնեան**

Պատասխանատու Տնօրէն, **Տ. Ճ. Որլորեան**

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան **2 Մէճիտ**

Արտասահման » » **1 Տօլար**

Հասցէ—

NOR AVEDAPER

B. P. 287

ALEP SYRIE